



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



9(495)

Ձ. Թագ-Հայոց պետքանի

Ա-70



I

# „Մ Ա Կ Ե Դ Օ Ն Ի Ա“

Ա.-ՊԵՏԵՂԲՈՒՐԳ

«Պուշկինեան արագատիպ» Հայկական տպարան

1903

01 AUG 2013

3211

Дозволено цензурою. С.-Петербургъ, 30 Января 1903 года.



«Пушкинская Скоропечатня», Лештуковъ, 4.



## ՄԱԿԵԴՈՆԻԱ

Սյժմ, երբ Մակեդոնիան ներկայանում է տիսուր տեսարանների միթատերաբեմ, որտեղ իւրաքանչիւր օրտեղի ունեցող սոսկալի գէպքերի նկարագիրները յիշեցնում են հայաստանում կատարվող արիւնոտ անցքերի սրտաձմիկ տեսարանները, իրա վրա դարձնելով Եւրոպական գիպլօմատիայի ուշագրութիւնը և հասարակական կարծիքը, աւելորդ չենք համարում մի քանի համառօտ տեղեկութիւններ տալ այդ թշուառ երկրի մասին:

Մակեդոնիան տաճկական կալւածք է և գտնվումէ այնպիսի պայմանների մէջ, որպիսի պայմաններ վիճակված են նաև արիւնոտ հայաստանին: Սրդարութիւնը վերացված, կեանքի ու գոյքի ապահովութիւնը արհամարված, երկիրը ներկայացնումէ անլուր բռնութիւնների, հարստահարութիւնների և հաղածանքների ասպարէզ, որտեղ մի փոքրիկ կակածին հետեւում է բանտ ու շղթայ, որտեղ մի

աննշան տրառունչը ընդունվումէ՝ որպէս անհնաղանդութեան մի ցցց, իր ետեից քարշ է տալիս սարսափու մահ, որտեղ օրէնքի փոխարէն թագաւորում է սուրն ու կախաղանը: Ահա թէ ինչու Մակեդոնիան կարելի է անուանել չայաստանի քոյրը:

Մակեդոնիան ընկած է Բալկանիան թերակղութիւնիս արևելեան մասում, սահմաններ ունենալով ծովը, Արևելիան Ռումիլիան, Բոլգարիան, Ալբանիան և Յունաստանը, կազմելով Եւրոպական Թուրքեայի չորս վիլաէթների, այն է Սալօնիկի, Մօնաստիրի, Ռւսկիւրի և Աղրիանապոլսի, մի ընդարձակ մասը:

Մակեդոնիայի տարածութիւնը հաշվում է մոտառապէս 44,000 քառակուսի վերստ մէկ ու կէս միլիոն բնակիչներով: այլ խօսքով նա հաւասար է մոտառապէս կովկասեան երկու նահանդների տարածութեան:

Հասկանալի է, որ այնպիսի սահմաններում մի ինքնուրցն վարչական մարմին գոյութիւնը իրաւաբանական աւելի մեծ հիմք ունի, քան փոքրիկ ջերնօդորիան իր 300,000 բնակիչներով:

Մակեդոնիան իր աշխարհագրական դիրքով ներկայացնում է Բալկանիան թերակղուն յատուկ մի այնպիսի տեսարան, որպիսին յատուկ է նաև կովկասին: Զիդ-ձիգ լեռնաշղթաներ, սրածայր գագաթներ, գեղեցիկ հովիտներ, պտղատու դաշտեր և բազմաթիւ գետեր ու լեռնային վտակներ ծածկում են սիրուն

Մակեդոնեայի մակերևոյթը, միւնցն ժամանակ հանդիսանալով երկրի պաշտպանութեան համար՝ որպէս բնական պատուարներ: Երկրի այսպիսի կազմութիւնը իր բրտութեամբ մի կողմից և ժամանակիւնաբերութեամբ միւս կողմից Մակեդոնական ժողովրդի մէջ գարբնել է պատերազմական ողի, անկախութեան սէր և տոկուն ու չարքաշ բնաւորութիւն: Սակայն հանգերձ այս բոլորով՝ շնորհիւ Մակեդոնիայի բարեխառն կլիմայի, երկրի այն մասերը, որոնք ընկած են ցած մակերևոյթի վրա, տեղտեղ ներկայացնում են մշակութեան համար այնպիսի պիտանի գաշտեր, որտեղ աճում են տաք կլիմա ունեցող երկիրների յատուկ բյուներ: Այսպէս բացի հացահատիկներից Մակեդոնեայում աճում են վարդենիներ, վարդի իւղ պատրաստելու համար, խաղողի վաղեր, ծխախոտ, բամբակ և այլ բազմաթիւ բյուներ:

Մակեդոնեայի ժողովուրդը ներկայացնում է մի խառնուրդ զանաղան յեղերի: Թէպէտ պավօնական տարրը աչքի է ընկնում իր բազմութեամբ: Փոքրաթիւ ոչ շքեղ քաղաքներում է որ տեղերում կեանք՝ առևտուրը գտնվում է մեռած դրութեան մէջ շնորհիւ աիրող անորմալ կարգերի և ճանապարհների անկանոն հաղորդակցութեան, բնակվում են նաև յոյներ և վալախներ: Ներսը, որը և կազմում է երկիրը մշակող և արդիւնաբերող գիւղական տարրը, բռնված է սլավօններով և տաճիկներով, իսկ արե-

ւելեան մասում բացառապէս ապրում են Ալբանացիներ: Մակեդօնիայում ապրում են նոյնպէս հրէաներ, սակայն աննշան չափով: Մակեդօնիայի սլավոնները, որոնք, մի կողմից ենթարկված լինելով թքական բարբարոսութիւններին, միւս կողմից ունենալով զբացիական ցեղական կապերը, բնականաբար պիտի բարեկամական յարաբերութիւնների մէջ լինեին Յունաստանի և Սերբեայի հետ, նրանց վրա կենտրօնացրած լինելով իրենց փրկութեան ապահով յցսերը: Բայց ընդհակառակիր՝ վերջինների հետ գտնվում են սառը, նոյն իսկ վատ յարաբերութիւնների մէջ, որով և լոյս է սփռվում Յունաստանի և Սերբեայի այն քաղաքական միտումների վրա, որով ուզում են Մակեդօնիան դցել իրենց գերիշխանութեան տակ: Այս հանգամաննքը՝ մի կողմից լեզուի նմանութիւնը և առետրական կապերով կապված լինելը միւս կողմից, Մակեդօնիայի և Բոլգարիայի յարաբերութիւնների մէջ հաստատել են բարեկամական մի կապ, որով Մակեդօնիան իր փրկութեան ամբողջ յցսը դրել է միմիայն Բոլգարիայի վրա, այնտեղ տեսնելով իրձգութեան իրականացումը: Եւ իսկապէս՝ Բալկաննեան թերակղու վրայ չկայ մի այլ երկիր, որտեղ Մակեդօնական շարժումները այն չափով արձագանք գտնեին, ինչ չափով Բոլգարիայում:

Մակեդօնիայի ազգաբնակութիւնը, ինչպէս և Տաճկաստանի լծի տակ հեծող իւրաքանչիւր ժողո-

վուրդ, գտնվում է դառն աղքատութեան մէջ: Ոչ սակաւապէտ կեանքը, ոչ չարքաշ ու կոպիտ տոկուն աշխատանքը չեն կարողացել փրկել նրանց տնտեսական քայքայումից: Եւ տաճիկ կառավարութեան հարաւահարիչ սիստեմատիկ ձևերն, հարկերի անհաւասար բաժանումը, հարկահաւաքների կեղեքումները, պաշտօնեաների կատարած անարդարութիւնները, բաշխիչ և կաշառքի վրա հիմնված դատավարութիւնը և վերջապէս կեանքի ու գոյքի անսապահովութիւնը այդ երկիրը հասցըել են մի այնպիսի ծայրահեղ չքաւորութեան, որ թելլ-թելից, ինչպէս ասում են, կտրվել է:

Այսպիսի պայմանների մէջ կենսունակութիւն ունեցող և վերածնվելու համար ձգտումը իր կրծքի մէջ կրող մի ժողովուրդ, որպիսին այժմ ներկայանում է Մակեդօնացին, հանգիստ լինել չեր կարող և նա թէկուզ ընդհատումներով երբեմն-երբեմն կ'ալեկոծվէր և բոնկումներ կ'առաջացնէր, ինչպէս բոլորովին չհանգած, բայց մոլեզնած հրաբուխը, մինչեւ որ կ'թոթափիվէր տաճկական թէկ մաշված, ժանգոտած, բայց Եւրոպական դիպլոմատիայի դարբնած երկաթէ լուծը: Ահա այդ բոնկումների և շարժումների մի շարքը լուսաւորում է Մակեդօնիայի խաւար մթնոլորտը՝ առանձնապէս վերջին տասնամեակի շրջանում, զուգնթաց գնալով այն դէպքերի հետ, որոնք կատարվում էին հայաստանում:

Եթէ մի թեթև ակնարկ ձգելու լինենք Մակեդոնիայի անցեալի վրա, կ'տեսնենք, որ այդ փոքրիկ երկիրը Յունաստանի պատմութեան մէջ մասնաւորապէս և ընդհանուր պատմութեան մէջ ընդհանրապէս, որպէս քաղաքական մի ուժեղ կազմ՝ մեծ դեր է խաղացել:

Այս փոքրիկ երկրի ծոցում ծնունդ է առել այն Աղէքսանդր Մակեդոնացին, որը իր աշխարհակալութիւններով եղակի տեղ է բռնում պատմութեան մէջ, որի պատերազմական հանճարի համահաւասար մի այլ հանճար չէ տալիս պատմութիւնը և որը միմիայն տասն երեք տարիների ընթացքում ոչ միայն ամբողջ Յունաստանին տիրեց, այլ և մէկը միւսի յետեից առանց ծանր դիմադրութիւնների Մակեդոնիայի գերիշխանութեան տակ վերցրեց ամբողջ Փոքր Ասիան, Եղիպտոսը, Ասորեստանը, Հայաստանը, և նոյն իսկ Հնդկաստան հասաւ նաև:

Մակեդոնիայի աշխարհակալութեան և փառքի այս շրջանը տեսումէ 359 մինչև 146 թուականը Քրիստոսից առաջ, որից յետոյ բաղդի անիւր, դառնալով մի առ մի, կորցնումէ նա տիրած երկիրները և, զրկվելով անկախութիւնից, փոփոխակի մէկ ընկնումէ բիւզոնդիօնի և մէկ Բոլգարիայի իշխանութեան տակ մինչև 1389 թ., երբ տաճիկները վերջնականապէս գալիս և տիրումէն Մակեդոնիան, որը Մակեդոնական լուծը թոթափելու համար՝ այնքան ճիգ է

գործ դրել ամեն անգամ, երբ առիթը ներկայացել է: Իւրաքանչիւր շարժում, որը առաջ է եկել բարկանեան թերակղու այս կամ այն մասում, այս կամ այն ժողովրդի մէջ իր վրա է դարձրել վազուց անկախութիւնը երազող Մակեդոնիայի ուշադրութիւնը, ստրկական լուծը թոթափելու բուռն չանքեր առաջ բերելով այնտեղ: Այնպէս Յունակս Յունաստանի շարժումները թէկ թզլ չափով, բայց արձագանք գտան Մակեդոնիայում, սակայն աւելի մեծ չափեր ընդունեցին 1868—1875 թուականների շարժումները, երբ Բոլգարիան երկունքի մէջ ճակատագրական կռիւ էր մղում անկախութեան համար: Ահա հենց այդ միջոցներին առաջ եկան Մակեդոնական յեղափոխութեան պատմութեան մէջ յայտնի ուժեր: Նրանցից մէկն էր Վասիլիյ Լեվսկի, որը տոգորված հայրենիքի ազատութեան գաղափարներով, մի քանի անգամ յայտնվեց Մակեդոնիայում, ուր արդէն բուն էին դրել բազմաթիւ յեղափոխական կոմիտէներ, կազմակերպեց հայդուկային խմբեր, որոնց գործունեութեանը քիչ չէին նպաստում անառիկ լեռները, յարմարաւոր զիրքերը և իր յանդուզն ու յամառ յարձակումներով առաջ բերեց բուռն հոգեւորութիւն ազատութեան ձիգերի հետ միասին, բայց այս անգամ շարժումները՝ ինչպէս և Բոլգարիայում՝ ձընշվեցին 1875:

Սակայն Բալկանեան թերակղու վրա, տաճկա-

կան բռնութիւնների դէմ զլուխ բարձրացրած  
փոքրիկ Մակեդօնիան, ազատութեան գրոշակը ամուր  
կը լով իր ուսերի վրա հաղերձ իր ուշաղրութեան  
կեղրօնը դարձրեց դէպի Բոլգարիա, որը չնորհիւ  
ուուսաց յաղթական զօրքի իր ստրկութեան շղթա-  
ները թոթափելուց յետոյ, նոյն չափ հոգացողու-  
թիւն ունեցաւ դէպի իր դրացի Մակեդօնիան:

Յեղական կապերը մի կողմից, Ան—Ստէֆանօի  
դաշնագիրը միւս կողմից, որի վճռով Մակեդօնիան  
պէտք է միանար Բոլգարիային, նոր զարկ տուին  
ազատութեան այդ շարժումներին, բայց Բերլինի  
կօնդրեսը հարցը այս անգամ այլկերպ վճռեց. Եւ-  
րոպական դիպլոմատիան անհրաժեշտ գտաւ մի ստ-  
րուկ ժողովրդի բարբարոսական տանշանքները յա-  
նուն քաղաքական շահերի:

Մակեդօնիայի թափած արիւնը քիչ համարվեց  
ազատութիւնը ստանալու համար: Արիւն... Արիւն...  
այս էր Եւրոպական դիպլոմատիայի վճիռը:

Փաստը սոսկալի, բայց ոչ վհատեցուցիչ մանուկ  
Մակեդօնիայի համար, որը հաշովելով իրերի գրու-  
թեան հետ, կոռւի դաշտ նետվեց, որպէսզի նոր  
հոսող արիւնով յագեցնէր, ինչպէս իր բոնակալների,  
նոյնպէս էլ քարասիրա դիպլոմատիոյի ծարաւը:

Բոլգարիայի փոխարէն պիտի տուժէր Մակե-  
դօնիան: Բոլգարիան կորցնելուց յետոյ տաճիկ կա-  
ռավարութիւնը իր վրէմը թափեց թշուառ Մա-

կեղծնիայի գլխին, մանաւանդ Եւրոպան Բերլինի  
կօնդրեսով խրախոյս հանդիսացաւ նրան: Եւ որպիսի  
անդթութիւններ՝ ասէք, որ տեղի չոնեցան բարդի  
կոմքին թողած այդ թշուառ երկրում:

Տաճկական բարբարոսութիւնը երևան հանեց  
գաղանութիւնների ամենասոսկալի տեսակը: Գիւղերը  
կրակի մատնեցին, բանտերը լցրեցին անմեղ զոհե-  
րով, խաղաղ ազգաբնակութիւնը սրի քաշեցին, կա-  
նանց և օրիորդներին բռնաբարութեան ենթարկեցին,  
մի խօսքով՝ սրբութիւն չ' մնաց, որ չ' պղծվէր տաճկի  
ձեռքով: Մակեդօնիան դարձաւ թշուառութիւնների,  
ողբի և չեծեծանքների մի սոսկալի վայր:

Հետեանքը ծանր էր, բէակցիան անխուսափելի:

Արբեցած ու յոգնած երկրի խոռոչներում  
հոսող արիւնը լերդաշաւ ու հոտեց, իսկ յուսահատ  
ու յոգնած շղերում սառեց ու կանգնեց, և ողե-  
ւորութեան անկեղծ ու առողջ զգացումները տեղի  
տուին տիսուր բէակցիային:

Հայրենիքի փրկութեան անուան տակ Մակե-  
դօնիայում յայտնվեցին մի շարք բաղդախնդիրներ,  
որոնք իրենց շահերի համար սկսեցին կողոպուտ,  
սպանութիւններ առանց խտրութիւն դնելու տաճկի  
և Մակեդօնացու մէջ: Նուիրական անուան տակ  
գործված մի շարք պժգալ խարեբայութիւններ  
այն աստիճանի սառնութիւն առաջ բերին ժողովրդի  
մէջ, որ նա ազատութեան յոյար միանգամայն կորց-

ըեց, երես դարձնելով նոյն իսկ այն մարդկանցից, որոնք, անկեղծ վշտով լցված, փորձումէին կանգնեցնել շարունակվող կործանիչ բէակցիան:

Բայց բէակցիան շարունակվում էր մինչև 1895 թ., երբ Տրախանօ Կիտանչեր, հրապարակ դարձի առաջին անգամ բարձրացրեց ապստամբութեան դրոշակը: Սակայն խաբեբայութիւններից և կողոպուտներից զայրացած և սառած բուլգարական ժողովուրդը ոչ միայն արձագանք չ' տուեց այդ հրաւերին, այլ և թշնամաբար վերաբերվեց դէպի նա: Այսպիսով Կիտանչեի փորձերը անցան անյաջող: Նրան յաջորդեցին Նիկալաեվ՝ այժմ ֆերգինանդ իշխանի գեներալներից մէկը և դօկտոր Թաղէ Բոլդուրական այժմեան արդարադատութեան մինիստրը, բայց շարժումը ընդհանուր ծաւալ չ' ստացաւ:

Այդ ժամանակ մի կողմից հայաստանում կատարվումէր սոսկալի արիւնով դրաման—սիստեմատիկ կոտորածները շարունակվումէին հայկական նահանգներում, իսկ միւս կողմից Պօլսում բարենորոգութիւնը ծրագիր էր կազմվում:

Բեֆօրմների այն ծրագիրը, որը կազմեցին Պօլսի գեսպանական մարմինները 1895 թ. Մայիսի 11-ին, որով հայկական հինգ վիլաէթներին տրվելու էր ներքին ինքնապարութիւն, տեղական ժանդարմէյիայով եւրոպական կանտրոլի տակ, ծայրահեղ ողերութեան ցոյցեր առաջ բերին հայկական շրջաններում:

Հիայմունքը ընդհանուր էր: Եւ այդ շարժութիւնները անհետեանք՝ չ' մնացին նաև Մակեդոնիայի վերաբերմամբ, նա նոյնպէս շարժվեց և կործանիչ բէակցիան չքացաւ:

Բոլգարիայում կազմակերպվեցին հայդուկային խմբեր, մտան Մակեդոնիայի սահմաններից ներս, յարձակվեցին մի քանի տաճիկ գիւղերի վրա, և այրեցին այդ գիւղերը: Ընդհարվելով տաճիկ զօրքերի հետ, սպանեցին մի քանի զինւորներին և օֆիցիերներին: Մակեդոնիայում կազմակերպվեց կեղրօնական կօմիտէ, որի զլուխը անցաւ նախ Կիտանչե, տպա Տուֆէկչւ և, նառումով: Մինիստր Սաօիլով սկզբում աշակեցութիւն ցոյց տալով կօմիտէին, վերջում ոչ միայն հակառակ գիրք բռնեց, չուզենալով կորցնել եւրոպայի համակրութիւնը, այլև Բուլգարիա փախած ապստամբներին, բանտարկել տուեց: Դրանից յետոյ Մակեդոնիայի հայրենասէրները ձեռքձեռքի տուեցին հայերի հետ, այդ կապի մէջ գտնելով իրենց փրկութիւնը: Ոչ մի հանգամանք այնպէս չի մօտեցնում մարդկանց, որպէս կացութիւնների նմանութիւնը: Իսկ Մակեդոնիայի և հայաստանի կացութիւնների նմանութեան տեսակը շատ քիչ է՝ գտնեք մի այլ տեղ: Եւ մերձեցումը իրականութիւն գտաւ: Մակեդոնիան կանգնեց ուղիղ և հաստատուն ճանապարհի վրա: Իր ձգտութիւնները համապատասխանումէին հայկական ձգտութիւններին: Ահա այն առա-

չին քայլը, որ պիտի տանէր դէպի ճնշվածների եղբայրակցութիւնը, դէպի ազատութիւնը, մի յար-մար առիթ էր հարկաւոր, որ իրականանար այդ յանկալի միութիւնը և այդպիսի առիթ ներկայացաւ Պօլսի հայկական ցոյցի—Օսմանեան բանկի գրաւմամբ 1896 թ. Օգոստոսի 14-ին:

Այդ օրը Պօլսի պատմութեան մէջ արձանագրված կ'մնայ արիւնուա տառերով, որը միւնոյն ժամանակ դարապլուխ պիտի կազմի ճնշված ազգերի վերածնութեան պատմութեան էջերում։ Այդ թուականը հանդէս բերեց տաճկական գաղանութիւնների ամենասուկալի չափը, հանդէս բերեց միւնոյն ժամանակ մի ճնշված ժողովուրդի անվեհէր հոգին, հերոսական մարտը յանուն նուիրական շահէրի։

Օսմանեան գանձարանը (բանկ օտօման) իր գանձերով և 300-ից աւելի պաշտօնեաններով գրաւված էր հայ յեղափոխականներով, որի լուսամուտների և կտուրների բարձրութիւնից նետվող ոռւմբները բանկի վրա խուժող զորքի և խուժանի շարքերից դիակների կյտեր էին կազմում։ Սամաթիայի զօրանոցը սոսկումի մէջ էր մանուկ հերոսների ոռւմբների կրակի տակ։ Գաղափարական սւսուցիչը իր սաների հետ առաջ էր տանում ազատութեան կորիւր մինչեւ մարտիրոսութիւնը, մինչեւ թունաւորումն։ Պօլսի իշեանները և յարմարաւոր աները ներկայացնում էին զլուխը կորցրած զօրքերի վրա կրակ տեղացող ամ-

րոցներ, ամեն կողմ պայթումէր հայ յեղափոխականի ոռւմբը, աւերմունքներ գործելով, դիակներ փռելով, իսկ Պօլսի յետ ընկած տաճիկ խուժանը սրի էր քաշում հայ ժողովուրդը, կատարելով հազարաւոր հայերի մարափրոսութեան դրամն։ Արիւն էր հոսում Պօլսի փողոցներով։ Այդ վայրկեանին դէմ առ դէմ կատարվումէին երկու սոսկալի դրամաններ, թուրքական բարբարոսութիւններին, որպէս հակակշիռ, ոնդիւն էր արձակում հերոսական մարտը—կամաւոր մարտիրոսութիւնը։

Հենց այդ սոսկալի դրամայի ժամանակ էլ տեղի ունեցաւ Մխիթարական փաստը ստրուկ ազգերի համար, Մակեդոնիայի ազատութեան և վրէժինդրութեան իղձր կրծքի մէջ կրող Բոլղարացիններ, հայ յեղափոխականներից խնդրելով ոռւմբներ բանկի ցոյցի յաջրդ օրը, մի քարվանասրայից ոռւմբային մի փոքրիկ ցոյց արեցին տաճիկ կառափարութեան դէմ և միւնոյն ժամանակ բոլղարացու անուան տակ Պօլսից փախցներով նրանցից այնպիսիններին, որոնց, հոտը առնելով տաճիկ կառափարութիւնը, հետեւումէր խիստ կերպով։ Ճնշվածների եղբայրակցութեան այս առաջին փաստը առանձնապէս նշանակութիւն է ստանում այն պատճառով, որ մինչ դեռ յշն և հրէա լրտեսները առնորդումէին տաճիկ խուժանին դէպի հայկական թաղերը, այդ միւնոյն ժամանակ Մակեդոնիայի հայրէնասէրները, զիմելով

Հայ յեղափոխականներին և իրանց հիացմունքը յայտնելով, իր տեսակի մէջ բացառիկ այդ ցոյցի առիթով գդգոհութիւն էին յայտնում, որ նրանք իրենց օդնութեան չէին կանչել ցոյցի ժամանակ:

Այդ օրուանից արդէն աստիճանաբար ամրապնդվումէ ընհանուր կապը հայ և Մակեդոնիայի յեղափոխականների մէջ, մի քայլ էլ աւելի առաջ տանելով նրանց արդար դատը:

1899 թուի Յունա - տաճկական պատերազմը առանձին յրյուեր առաջ բերեց Մակեդոնիայի հայրենասէրների մէջ, որոնք, տեսնելով կարինէտների միշամութիւնը Յունա - տաճկական պատերազմում՝ դիմումն արեցին այդ կարինէտներին Մակեդոնական հարցի առիթով բայց ստանալով նրանց անորոշ և երկրիմ պատասխանը, երես դարձրեցին նրանցից, կրկին աշակցութիւն որոնելով ցեղակից Բոլգարիայում:

1899 թուին Սօֆիայում կաղմվեց մի կօմիտտէտ, որը մինչեւ այսօր էլ առաջ է տանում Մակեդոնիայի ազատութեան պրօպագանդան: Այս պրօպագանդան այնպիսի յաշող ընթացք ստացաւ, որ մինչեւ անդամ Բոլգարական զօրքի մէջ ծառայող երիտասարդ սպաները թողնումէին իրենց պաշտօնները և մտնում կամաւորների շարքերը, ստուարացնելով հայրենիքի դատին նուիրվածների թիւը: Եւ այդպիսով նոյն իսկ կօմիտէտը կաղմված էր պաշ-

տօնները թողած սպաներից, իրենց զլուխ ունենալով Բօրիս Սարաֆովին:

Որպէս Մակեդոնական շարժման ողի, երիտասարդ Սարաֆովին յաջողվեց անշատված խմբերից կաղմել մի միութիւն և, Յոլգարիայում լոյս տեսնող Մակեդոնական դատին նուիրված 5-6 թերթերը միացնելով, հրատարակել միմայն մէկը:

Նաբաճթը մի անդամ հրատարակվող «Փեֆորմա» լրագիրը խմբագրվում և տպագրվում է այն տան մէջ, որտեղ զեակլված է նաև կօմիտէտը: Այդ տունը շատ նման է ամեն մի քաղաքում սովորական գարձած դրասենեակներին, միայն այն տարբերութեամբ, որ սեղանների վրա ցուցակների և զանազան թղթերի հետ միասին գարսված կան նաև մի քանի ատրճանակներ իրանց փամփուշաներով: Իսկ դաշլիճի պատերից քարշ են արված 1895 թուին թշնամուց խած դրօշակներ, զէնքերը և այլն:

Երեկոյեան ժամկ 6-8-ին այդտեղ հավաքվում են կօմիտէտների զիլաւորները և բաւականին կողմանի մարդիկ: Ով չի համարվում լրտես կամ թշնամի, նրան ազատ մուտք է տրվում այդտեղ:

Կօմիտէտի առաջին և զիլաւոր ինդիբրը նիւթականն է, պրօպագանդան և գործը պահանջում էն միջոցներ, իսկ կամաւոր տուրքերը շատ քիչ են եղած կարիքները ծածկելու համար: Այս հանդամանքը կօմիտէտին դրեց բանի միջոցներով տուրք հաւակոմիտէտին դրեց բանի միջոցներով տուրք հաւա-

քելու կարիքի մէջ, որը և առաջ բերեց մի շարք  
բարդութիւններ:

Ուումինիայի յարաբերութիւնները Բոլգարիայի  
հետ լարվեցին, երբ մի ռումինիայի Սօֆիայի  
փողոցներում ծանր վիրաւորվեց: Այս սպանութեան  
առիթով Բոլգարիան Ուումինիայից սաացաւ նօտա,  
բայց անհետանեք թողեց:

Մի փոքր անց՝ ծագումով Բոլգարայի, Տաճկա-  
կան լրտեսր՝ կօմիտետի որոշամամբ Ուումինիայի սահ-  
մաններում Էնթարկվեց տերրօրի. Ուումինիայի  
մասնութը, մանաւանդ Պրօֆեսոր Միխայէլանո իր  
թերթում, յարձակվեցին Բոլգարիայի վրա, Բոլգա-  
րիայում զործող Մակեդոնական կօմիտետին մեղադ-  
րելով աւազակային զործողութիւնների մէջ: Օրը  
ցերեկով Բուխարեստի մէջ Միխայէլանո Էնթարկվեց  
տերրօրի: Տերրօրիստները խոստովանվեցին, որ իրանք  
զործել են Սօֆիայի կօմիտեի վճռով: Այս դէպքը  
անխուսափելի դարձրեց պատերազմը Ուումինիայի  
և Բոլգարիայի մէջ, եթէ միայն չմիջամտէր Եւրո-  
պական դիպլոմատիան:

Մի կողմից այս, միւս կողմից տաճկաց կառա-  
վարութեան դիմումները պաշտօնական Բոլգարիա-  
յում հակառակ զործողութիւններ առաջ բերին: Նախ  
1901 թ. հրաարակվեց մի օրէնք, որով արգելվում  
էր զէնք կրելը և ապա խուզարկվեցին ու բանտար-

կվեցին Մակեդոնական կօմիտետի անդամները, որոնց  
թւումն էր նաև Սարաֆովը:

Պաշտօնական Բոլգարիայի այս ընթացքը Մա-  
կեդոնիայի հայրենասէրների առաջ բոլորովին  
մի նոր խնդիր:

Նոր կօմիտետը փորձով համոզվեց, որ սար-  
կութեան հարստահարութիւնների տակ հեծող մի  
ժողովուրդ այնքան էլ իրաւունք չ'ունէր, ազատու-  
թիւն գտած մի թէ կուզ ցեղակից կառավարու-  
թիւնից, անմիջական օգնութիւն սպասել: Ուրեմն  
ինչու շարունակել Մակեդոնիան Բոլգարիայի հետ  
միացնելու: Եւ ահա մշակվեց ապագայ Մակեդո-  
նիայի համար նոր վարչական ձեւ: Այն է. Սալօնիկի,  
Մօնաստիրի, Ուսկիւրի, Ալբանակազօղուց վիւէկթ-  
ներից կազմել թիւրքայից անկախ մի նոր գահակ-  
յութիւն՝ նման Շվեցարիական դաշնակցութեան,  
որը կ'կառավարվի ինքնառարական սկզբունքով: Բո-  
լոր պաշտօնեաները, ինչպէս և գաշնակցութեան  
նախադահը՝ կ'ընտրվին ընդհանուր ձայնատվութեան  
օրէնքների հիման վրա, տեղական բոլոր խնդիրները  
կենթարկվին գաշնակցական խորհրդի իրաւասու-  
թեան: Բայց կօմիտետը վերջականապէս եկաւ  
այն եղբակացութեան, որ ընդհանուր թշնամու-  
դէմ կովելու համար անհրաժեշտ է հայերի գաշ-  
նակցութիւնը, այդ համարելով մի բնական միու-  
թիւն ձնշվածների մէջ ընդգէմ բոնակալի:

Եւ այդ օրից մենք տեսնում ենք հայ և Մակեդոնիայի յեղափոխականներին միենցն շարքերում կռուելիս: Այսպիսի մի կուր տեղի ունեցաւ Ազրիանոպօլսի շրջակայքում 1901 թ. ամսոն, որի ժամանակ Հայ-Մակեդոնական զինված խոռմբը լնդհարվելով տաճկական անհամեմատ մեծ թիւ կազմող զօրքի հետ, մի հերոսական ճակատամարտ ունեցաւ: Անհաւասար կռուի մէջ բազմաթիւ զինւորներ տապալելուց յետոյ, տասն կտրիձներից վեցը ընկան բազմաթիւ վերքերով խակ չորսը վիրաւորվելով, գերի տարվեցան: Այս չորսից երկուսը հայերէն և երկուսը Մակեդոնացիներ:

Տաճիկ կառավարութիւնը անսարքեր մնալ չեր կարող այս դաշնակցութեան դէմ: Նրան կատաղեցնում էր այն հանգամանքը, որ իրեն դէմ դաշնակցութիւն են կազմում ազգային, յեղական ոչ մի կապ չունեցող երկու ժողովուրդներ, որոնք դարերով իր սարուկներ են եղել: Եւ աչա իլդեղ — Կիոսկը, կատաղի ցասման մէջ դէպի մի այգակիսի յանդզնութիւնը, մի սոսկալի վճիռ արձակեց:

Անցեալ 1901 թուի գեկտեմբերի 9-ին Մարիցիայի ափերում, Ազրիանոպօլսի չորս զանազան հրապարակների վրա կախազան բարձրացրին այդ չորս կտրիձներին՝ որպէս սոսկ աւագակներ:

1. Պետրոս Սէրէմձեան Ֆիլիպեցի, Բոլգարացի սպայ — Հայ:

2. Օսիկ Թօրօսեան Թէքիրտաղցի — Հայ:
3. Խրիստօ-Հաջի Խլիեկ — Մակեդոնացի և
4. Սվետոսլավ Մէրձանով Գանապատցի, Ժնևի համալսարանից — Մակեդոնացի:

Աչա այս վերջինի կաղախանկ կանգնեցրին Բոլգարիայիների զինազիայի դիմացը, ուսանողների վրա սարսափ ազգելու նպատակով:

Եւ այսպէս երկու սարուկ ազգերի երկու զոյդ հայրենասէրներ միաժամանակ կախաղան բարձրացան իրենց հայրենիքի վրկութեան արդար դատի համար, որպէս մի անզուսպ բողոք տաճկի բարբարոսութիւնների դէմ: Որպէս մի նոր կապ Հայ Մակեդոնական համերաշխութեան:

Ոճրագործութեան այս սոսկալի սիւները բարձրացան այն միջոցին, երբ Երախատապարտ Բոլգարիան կանգնեցնում էր իր ազատարար Ազէքսանդր II-ի կոթողը:

Այսպիսի կօնարասատներով լի է այդ երկու աղդերի արիւնով զրված տարեզրութիւնը:

Մակեդոնիայի խնդիրը այսօր էլ նոյն վիճակի մէջ է, ինչ վիճակի մէջ որ է հայկական հարցը:

Ներկա վայրկեանին Մակեդոնական խնդիրը մի նոր շրջանի մէջ է մաել: Ամբողջ Մակեդոնիան ընդհանուր ալղատամբութեան զրօշակ բարձրացրած, օրհասական կուր է մղում իր բռնակալի դէմ: Այդ

շարժման զլուխ անցյած հայրենասէրների ծիղերը,  
եթէ ոչ այսօր, անշուշտ վաղը ազատութիւն կ'ձնեն  
դարերով տանջված ժողովրդի համար:

Ծուտազգի ցանկալի առաւօսք... Այդ  
առաւօսք հեռու չէ...

-23-



$$-24 + 72 = 96 \text{ hr}$$

3210

1CUN41  
U-6